ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.03.2021թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/07

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի տնօրեն

Է. Փոթոյանի (պետական գրանցման համար՝ 273.110.1148876),

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի ներկայացուցիչներ

Գ. Ադամյանի (լիազորագիր՝ տրված 05.03.2021թ.),

Պ. Գաբրելյանի (լիազորագիր՝ տրված 05.03.2021թ.),

քննելով «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021թ. ներկայացված և 03.03.2021թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/07 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «էֆ Բի էյ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«էֆ Բի էյ» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 03.03.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

«ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն մասնակցել է «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված թիվ «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժնին և ներկայացրել է նվազագույն գնային առաջարկ:

11.02.2021թ-ի թիվ 2 արձանագրությունով առաջարկվել է «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ին շտկել հավելված 1.1-ը և ներկայացնել արտադրողի վերաբերյալ տվյալները:

Սահմանված ժամկետում «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն կատարել է շտկումը և ներկայացրել շտկված տարբերակը:

16.02.2021թ-ի թիվ 3 արձանագրությունով պատվիրատուն նշել է, որ «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի շտկումը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջին, այսինքն՝ հրավերով սահմանվել է պահանջ ներկայացնել միայն մեկ արտադրող, այնինչ մեր կազմակերպությունը ներկայացրել է մի քանի արտադրողներ:

2. Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանման, «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների կարգը սահմանելու ՀՀ կառավարության որոշումների՝ եթե գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող վերոհիշյալ տվյալները, գտնում ենք, որ դրանք (որոնք ներառվելու են կնքվելիք պայմանագրի նախագծում) կարող են լինել մեկից ավելին, եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Համաձայն ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 22-րդ կետի՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց

պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը :

Փաստացի մեր կազմակերպության կողմից կատարվել է համապատասխան շտկումը՝ նշելով առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը:

Ինչ վերաբերում է նրան, որ հրավերով սահմանափակում է կիրառվել արտադրողների քանակի վրա՝ պահանջելով նշել միայն մեկ արտադրողի անվանում, ապա օրենքը և կառավարության որոշումները ունեն գերակա առաջնահերթություն:

3. Բողոք ներկայացրած անձի պահանջ

Պարտավորեցնել «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին կատարել ուղղում իր թիվ 3 արձանագրությունում և «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ի շտկումը համարել ընդունելի և մեր կազմակերպությանը ճանաչել, որպես ընտրված մասնակից 7-րդ չափաբաժնի մասով»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.03.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

<u>2. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամը (հետայսու՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 05.03.2021թ. թիվ 09-291 գրությամբ բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ձեզ եմ ներկայացնում «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/07 ծածկագրով բողոքին վերաբերվող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները և համալսարանի գրավոր դիրքորոշումը:

«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից հայտարարված «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն:

«ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի առաջին մասի 4-րդ բաժնի 4.3 կետով, ինչպես նաև «առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» Հավելված 1.1-ով սահմանված է հետևյալ պահանջը՝ Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն՝ յուրաքանչյուրից մեկական (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիրը), 9,10,42 չափաբաժինների համար ապրանքային նշանը և արտադրողի անվանումը պարտադիր չէ.

Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից հրավերի վերոնշյալ պայմանների պարզաբանման վերաբերյալ չի ներկայացվել պարզաբանման տրամադրման պահանջ:

«ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն, հայտի «առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» Հավելված 1.1-ով ներկայացրել է հետևյալը՝

Հ/հ	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
7	Վատման սպիտակ 220գր	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Գծագրական թուղթ / Վատման, խտությունը 220գ/ք.մ չափը 60x84սմ , սպիտակ, գործարանային փաթեթավորում , տուփի մեջ 100 հատ

«ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2021թ. նիստի արձանագրության թիվ 5 որոշմամաբ արձանագրվել են մասնակիցների, այդ թվում «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի ներկայացրած

հայտերում առկա անհամապատասխանությունները հրավերով սահմանված վավերապայմանների նկատմամբ:

Սույն թվականի փետրվարի 12-ին «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ին ընթացակարգի քարտուղարի կողմից ներկայացվել է հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ գրավոր ծանուցում:

Սահմանված ժամկետում «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացվել է «առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» Հավելված 1.1-ի հետևյալ տարբերակը:

Հ/ հ	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագրերը
7	Վատման սպիտակ 220գր	Փեյփր Ինդասթրի Փրինթինգ մաթերիալ Ալբիո պրոիզվոդստվո դիագրամնիխ բումագ Կոմպաս Վոստոկ Ջի էս թի Ալնդ Էսռտէ թիեռտի Ըլենգ Բոլին	Գծագրական թուղթ / Վատման, խտությունը 220գ/ք.մ չափը 60x84սմ, սպիտակ, գործարանային փաթեթավորում, տուփի մեջ 100 հատ

Ինչպես երևում է վերոնշյալ աղյուսակից, մասնակիցը աղյուսակի «արտադրողի անվանում» սյունակում ներկայացնելով մեկից ավելի արտադրողի անվանում, իսկ «ապրանքային նշան» սյունյակը թողնելով անփոփոխ, չի շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 42-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.10-րդ կետի պահանջները, գնահատող հանձնաժողովի 16.02.2021թ. նիստի արձանագրության թիվ 2 որոշմամաբ «ԷՖԲԻԷՅ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

ԲՈՂՈՔԻ ԱՌԱՐԿԱ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՐԱՎԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋԻ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅՏԻ ՄԵՐԺՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝

Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8-րդ բաժնի 8.2-րդ կետով սահմանված է՝

Հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հրավերով սահմանված է՝

Հարգելի մասնակից նախքան հայտ կազմելը և ներկայացնելը խնդրում ենք մանրամասնորեն ուսումնասիրել սույն հրավերը, քանի որ հրավերին չհամապատասխանող հայտերը ենթակա են մերժման:

ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 21-րդ կետի համաձայն՝

Եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝

1) կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է՝

ա. գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը:

Պատվիրատուն իրեն վերապահված լիազորությունների կատարման համար, ինքնուրույն է որոշում կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման պայմանները՝ պահպանելով գնումների օրենսդրության պահանջները: Կարգի 21-րդ կետի համաձայն, մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության հրավերով ներկայացման անհրաժեշտության որոշման լիազորությունները տրված են Պատվիրատուներին: Հրավերով, մեկական ապրանքային նշանի և արտադրողի անվանման սահմանումը չի հակասում գնումների օրենսդրության որևէ դրույթին և չի կարող սահմանափակել մրցակցությունը:

Դրա վառ ապացույցն է հանդիսանում այն հանգամանքը, որ տվյալ գնման ընթացակարգի թվով 39 չափաբաժնի մասով սահմանվել է մեկական ապրանքային նշանի և արտադրող երկրի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման պահանջ: Արդյունքում, նշված չափաբաժինների մասով մասնակցության հայտ են ներկայացրել թվով 12 մասնակից, որոնցից 11-ը ներկայացրել են տեղեկատվություն ապրանքային նշանի և արտադրողի անվանման վերաբերյալ՝ յուրաքանչյուրից մեկական: Բողոքի առարկա հանդիսացող ընթացակարգի 7-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել թվով երկու մասնակից: Բացի այդ, հարկ եղած դեպքում, պատրաստ ենք ներկայացնել հիմնավորումներ, ընթացակարգի հրավերի 7-րդ չափաբաժնով սահմանված ամբողջական տեխնիկական բնութագրի՝ գնումների գործընթացի կազմակերպման կարգի 22-րդ կետի պահանջներին համապատասխանելու վերաբերյալ, այն է՝

Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ:

Բողոքով նշված ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը կարող է լինել կիրառելի այն դեպքում, երբ հրավերով բացակայում է ապրանքային նշանի և արտադրող երկրի վերաբերյալ տեղեկատվության առավելագույն քանակի սահմանումը:

Բացի այդ, հանդիսանալով Պատվիրատու, վերապահված լիազորությունների կատարման համար, անթույլատրելի ենք համարում ապրանքների գնման պայմանագրերում, միևնույն ապրանքատեսակի մասով սահմանել մեկից ավելի արտադրողի անվանում և ապրանքային նշան, քանի որ տվյալ դեպքում առաջանում են ապրանքի նպատակային օգտագործման արդյունավետության, շահառուներին ապրանքների բաշխման արդյունավետության և այլ ռիսկեր:

Տվյալ դեպքում գնման առարկա է հանդիսանում «Վատման սպիտակ 220 գր.»՝ 60 կգ քանակությամբ ապրանքատեսակը, որը նախատեսված է միանվագ տպագրական հատուկ աշխատանք իրականացնելու համար: Մասնակցի հետ կնքելով պայմանագիր մեկից ավելի ապրանքային նշան ունեցող ապրանքատեսակի համար, Պատվիրատուն հնարավորություն է ընձեռում պայմանագրի կողմին մատակարարելու տարբեր ապրանքային նշաններով միևնույն ապրանքատեսակը՝ չգերազանցելով պայմանագրով սահմանված ապրանքի մատակարարման քանակը: Հրավերով «Վատման սպիտակ 220 գր.» անվանումով ապրանքատեսակի տեխնիկական բնութագրում առկա չէ վատմանի սպիտակությունը բնութագրող որևէ չափորոշիչ, քանի որ վատմանի նպատակային

օգտագործման համար վերջինի սպիտակության աստիճանը էական չէ, եթե օգտագործվող ողջ քանակը արտադրված է մեկ կազմակերպության կողմից: Տարբեր արտադրողների վատմանները կարող են ունենալ տարբեր՝ կտրուկ տարբերվող սպիտակություն և մաիաժամանակ համապատասխանել հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին, սակյան այդ դեպքում գնված ապրանքը չի ծառայի իր նպատակին:

Հարկ ենք համարում նշել նաև, որ «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի 7-րդ չափաբաժինը հայտարարվել է չկայացած, քանի որ տվյալ չափաբաժնով մեկ այլ մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում էր տվյալ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

Հաշվի առնելով այն փաստը, որ «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել և մերժվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով, գտնում ենք, որ «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը անհիմն է, ուստի խնդրում ենք Ձեզ այն մերժել:

ԼՐԱՑՈՒՄ՝

Ձեզ ենք ներկայացնում բողոքարկվող գնման ընթացակարգի հետ չառնչվող, սակայն մեր համոզմամբ որոշման կայացման համար նշանակություն ունեցող հետևյալ տեղեկատվությունը՝

Տվյալ ժամանակահատվածում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից իրականցվում է թվով երեք այլ գնման ընթացակարգերի ամփոփում: Նշված տարբեր գնման ընթացակարգերի շրջանակներում, ներկայացնելով միևնույն ապրանքատեսակների համար մեկից ավելի ապրանքային նշան, մասնակցության հայտ են ներկայացրել թվով երեք տարբեր կազմակերպություններ: Նշված կազմակերպությունների՝ «ԱՐՋԻՋԻ» ՍՊԸ-ի, «ՋԻԱՐՋԻ» ՍՊԸ-ի և բողոքաբեր հանդիսացող «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունում, որպես իրական շահառու նշված է միևնույն անձը՝ Արման Դաշյան Վլադիմիրի, անձնագիր՝ AM0389518:

Վերոնշված այլ գնման ընթացակարգերի շրջանակներում գնահատող հանձնաժողովների կողմից արձանագրվել են բողոքի առարկա հանդիսացող նույն անհամապատասխանությունները: Սակայն նշված լրացուցիչ դեպքերում մասնակիցները

շտկել են արձանագրված անհամապատասխանությունները՝ ներկայացնելով մեկական ապրանքային նշան և արտադրողի անվանում»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 09.03.2021թ. ժամը 09:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

<u>3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2021/07 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետով և Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, սահմանվել է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն՝ յուրաքանչյուրից մեկական (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիրը), 9,10,42 չափաբաժինների համար ապրանքային նշանը և արտադրողի անվանումը պարտադիր չէ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝

-առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1-ում), որտեղ 7-րդ չափաբաժնի մասով հստակ ներկայացված չէ արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝

հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և տրամադրել Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ՝ հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 12.02.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս չի շտկել արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը համաձայն հրավերի, ըստ որի՝ 1-ին մասի 4-րդ բաժնի 2-րդ կետի և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված 1.1) պետք է ներկայացվեր մեկական արտադրողի անվանում:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի 05.03.2021թ. թիվ 09-293 գրությունը, «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով ընթացակարգի հրավերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Այսպիսով՝ Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետով սահմանվել է, որ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով:

Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Այսպիսով՝ «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի կողմից կազմակերպվել է «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետով և Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, սահմանվել է, որ Մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև ***առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն՝*** **<u>յուրաքանչյուրից մեկական</u>**,9,10,42 չափաբաժինների համար ապրանքային նշանը և արտադրողի անվանումը պարտադիր չէ:

«Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն հայտի 1.1 հավելվածը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, Ընթացակարգի 7-րդ չափաբաժանի մասով ներկայացրել է հետևյալ տեսքով.

Հավելված 1.1
«ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

«ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն «ԳՀԱՊՁԲ-2021/3-2-ԵՊԲՀ»

ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ **յուրաքանչյուրից մեկական**

Հ/հ	Առաջարկվող ապրանքի		
	ապրանքային	արտադրողի	տեխնիկական բնութագրերը

	նշանը	անվանումը	
7	Վատման սպիտակ 220գր	Չինաստան, Հնդկաստան, Ռուսաստան, Ուկրաինա, Բելառուսիա	Գծագրական թուղթ /Վատման, խտությունը 220գ/ք.մ չափը 60x84սմ , սպիտակ, գործարանային փաթեթավորում, տուփի մեջ 100 հատ

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.02.2021թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են պահանջվող փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան, բացառությամբ՝

-առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (Հավելված 1.1-ում), որտեղ 7-րդ չափաբաժնի մասով հստակ ներկայացված չէ արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և տրամադրել Ընկերությանը մեկ աշխատանքային օր ժամկետ՝ հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու համար:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 12.02.2021թ. էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել է Ընկերությանն արձանագրված անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 16.02.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է Ընկերության հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինս չի շտկել արտադրողի վերաբերյալ տեղեկատվությունը համաձայն հրավերի, ըստ որի՝ 1-ին մասի 4-րդ բաժնի 2-րդ կետի և առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (հավելված 1.1) պետք է ներկայացվեր մեկական արտադրողի անվանում:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ն բողոքի քննության ընթացքում հայտնել է, որ հրավերով սահմանափակում է կիրառվել արտադրողների քանակի վրա՝ պահանջելով նշել միայն մեկ արտադրողի անվանում, մինչդեռ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված պարզաբանման՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնումների կարգը սահմանելու ՀՀ կառավարության որոշումների՝ եթե գնման ընթացակարգի հրավերով նախատեսվում է, որ մասնակիցը հայտով պետք է

ներկայացնի նաև իր կողմից առաջարկվող վերոհիշյալ տվյալները, ապա դրանք (որոնք ներառվելու են կնքվելիք պայմանագրի նախագծում) կարող են լինել մեկից ավելին, եթե մասնակցի կողմից առաջարկվող՝ տարբեր երկրներում տարբեր արտադրողների կողմից արտադրված, ինչպես նաև տարբեր ապրանքային նշան, ֆիրմային անվանում և մակնիշ ունեցող ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են գնման ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Պատվիրատուի ներկայացուցիչը ԳԲՔԱ-ՆԳ-2021/07 բողոքի քննության շրջանակներում ներկայացված դիրքորոշմամբ և հրավիրված նիստի ընթացքում հայտնել է, որ բողոքով վիճարկվող հարցի շուրջ Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն՝ «Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել հրավերի պարզաբանման տրամադրման պահանջ:

Այսպիսով՝ անդրադառնալով Ընկերության կողմից բողոքով վիճարկվող հարցին, այն է՝ Ընթացակարգի հրավերով սահմանափակում է կիրառվել արտադրողների քանակի վրա՝ պահանջելով նշել միայն մեկ արտադրողի անվանում, որի հիմքով և մերժվել է Ընկերության հայտը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը, մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերության կողմից մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը ո՛չ Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների, և ո՛չ էլ գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ բողոք չի ներկայացվել, ավելին, Օրենքի 29-րդ հոդվածի համաձայն, մասնակիցն իրավունք ունի պատվիրատուից պահանջել հրավերի պարզաբանում, որը ևս Ընկերության կողմից չի պահանջվել, իսկ վիճարկվող բողոքը ներկայացվել է հայտերը բացվելուց հետո, երբ Ընկերության հայտը մերժվել է, ուստի բողոքը սույն մասով չի կարող քննության առարկա հանդիսանալ, քանի որ բողոքը ներկայացվել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով սահմանված ժամկետից հետո:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերության հայտը Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 4-րդ կետի 4.3-րդ ենթակետով սահմանված պահանջին, այն է՝ «Մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև ***առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը և արտադրողի վերաբերյալ տեղեկատվություն***՝

<u>յուրաքանչյուրից մեկական»</u> չհամապատասխանելու հիմքով մերժելու իրավաչափությանը, ապա սույն մասով հարկ եմ համարում արձանագրել, որ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այսպիսով, վերը նշված իրավակարգավորումներով պայմանավորված, գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ Ընկերության հայտը գնահատելիս առաջնորդվելով Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներով, գործել է Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 8-րդ կետի 8.2-րդ ենթակետով սահմանված պահանջների պահպանմամբ, հետևաբար նման պայմաններում գտնում եմ, որ Ընկերության բողոքը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էֆ Բի Էյ» ՍՊԸ-ի կողմից 03.03.2021թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**